

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի այցը Արագածոտնի մարզ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը հունիսի 28-ին աշխատանքային այցով ժամանեց Արագածոտնի մարզ:

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանը և նախարարը այցելեցին Ապարան քաղաք, որտեղ կազմակերպվել էր աշխատաշուկա: Կրթական, առողջապահական, արտադրական կազմակերպությունները, անհատ ձեռնարկատիրական ընկերություններն ու ՍՊԸ-ները ներկայացրին իրենց ոլորտներում առկա թափուր աշխատատեղերը, որոնք հետաքրքրեցին աշխատանք փնտրող անձանց, երիտասարդներին, ուսանողներին:

Նախարարը եւ մարզպետը քննարկեցին մարզում ինտեգրված սոցիալական ծառայությունների ստեղծման հնարավորությունները: Մասնավորապես նախատեսվեց այդ նպատակով Ապարանում օգտագործել նախկին արհեստագործական ուսումնարանի շենքը, որը կիսաքանդ է եւ նարկայումս չի օգտագործվում, իսկ Աշտարակում այդ նպատակին ծառայեցնել բժշկական կենտրոնի մասնաշենքերից մի մասնաբաժին:

Արտեմ Ասատրյանը եւ Գաբրիել Գյոզալյանը այցելեցին նաեւ Փարպի համայնք եւ ծանոթացան «Վարձատրվող հասարակական աշխատանքներ», ծրագրով այստեղ իրականացված խաղահրապարակի եւ դրա շրջակայքի բարեկարգման աշխատանքներին: